



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՒՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԻՆՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԶՄԻՒՌՆԻԱ ՈՒՐԲԱԹ 12 ՅՈՒՆԻՍԻ 1859

ԹԻՒ 599

ԶՄԻՒՌՆԻԱ, 12 ՅՈՒՆԻՍԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՄ

Վաղղիացի և Սարտենիացի գաղանկից զօրքը յաջողութեան մէջ կրգտնուին : Իննթէ-Մա- ճէնթայի մեծ յաղթութենէ ետեւ, ուր ինչպէս յայտնի է, Մարտիացիք 15 հազար հոգիի չափ կորսնցուցին, բայց ի 5000 հոգիէ որ գերի բռ- նուեցան, գաղանկից զօրքը յառաջ քաշելով Միլան մտան, զոր Մարտիացիք փութացրի կին պարպելու : Թէպէտեւ Վէնայի լրագրութիւն- ները քօղարկութեամբ և պղտիկցնելով կրպատ- մեն այս երևելի դէպքերը, և թէպէտ երկու պատերազմող կողմերէն ևս իրարու հակառակ և չափազանցական լուրեր կը հրատարակուին, ի վերայ այս ամենայնի տարակոյտ չկայ թէ գաղ- նակիցք օրըստօրէ յառաջանալու վրայ են և Վարդէոն կոյսեր անունը մեծ սողեցուցութիւն և համակրութիւն կրպատածուէ բոլոր Ռաշադուց վրայ, այնինչ Մարտիացիք անոնց սաստիկ ատե- լութեանը և հակակրութեանը ենթակայ եղած են ի վաղուց անտի :

Վէնայէն կը գրեն թէ Վիւլայ զօրապետը՝ ու ըուն յանձնուած էր Մոնպարտեան-Վենետիկի նահանգը գտնուող աւստրիացի զօրաց վերին հրամանատարութիւնը, իւր պաշտօնէն զրկուե- ցաւ, և օգոստոսիան Պրանչիսկոս (Յոսէֆի կայսեր հրամանացը համեմատ մարաշխտ Հէս սեպուհը յաջորդեց անոր, որ Մարտիացի ամե- նէն երևելի զօրապետն է :

Փարիզի Միլիթեր օրագիրը կը ծանուցանէ թէ Վարդէոն կայսեր հրամանաւ Մար-Մահն և Ռէյնօ տը Մէն-Սան տ'Նիւնի զօրապետները ի վարձատրութիւն իրենց քաջագործութեանցը, մարաշխտ անուանեցան :

Թէպէտեւ առաջիկայ պատերազմին՝ Ռաշադուց սահմաններէն դուրս չելիլու յոյսը հաստատուն է միշտ, բայց և այնպէս Վարդէոն մեծ և պզտիկ տէրութիւնները խիստ մեծ գործունէու- թեամբ կը շարունակեն և յառաջ կը տանին իւր ենց զինուորական պատրաստութիւնները, որ պէտքի ամեն անակնկալ դիպուածոց առաջքը առնելու կարող ըլլան : Մարտիացի կառավարու- թիւնը իւր ամեն ջանքը ի գործ կը դնէ միշտ, համոզելու համար զգերմանական գաղանկիցու- թիւնը որ իրեն հետ միաւորուելով՝ պատերազմի ընդդէմ Վաղղիոյ և Սարտենիոյ Ռաշադուցի մէջ, Ռայց ինչպէս կը տեսնուի, մինչև ցայսօր չյաջողեցաւ իւր նպատակին հասնելու :

Ռուսաց կառավարութիւնը այս բանին շատ դէմ է. այնինքն կուզէ որ գերմանական գաղ- նակիցութիւնը կատարեալ չէ զորութեան մէջ մնայ : Այս մտքը, Ռուսաց արտաքին գործոց պաշտօնէնայ Քորթաբոֆ իշխանը շրջաբերական ընդարձակ նամակ մը յուղարկած է գերմանա- կան տէրութեանց, որոց յայտնապէս կը ծանու- ցանէ թէ իրաւունք չունին միջամուխ ըլլալու պատերազմին, զոր Մարտիացի կընէ Ռաշադուցի մէջ այնպիսի երկրի մը համար՝ որ գերմանական չէ : Իւր իւր ըսածը հաստատելու համար, Քորթաբոֆ իշխանը գաղանկիցութիւնները յա- ռաջ կը բերէ, որով հաստատուեցաւ գերմանա- կան գաղանկիցութիւնը : Ռուսիան իրաւունք ունի, կըսէ, այս գաղանկիցութիւնները յիշելու, քանզի ինքն ալ իւր ստորագրութիւնը գրած է անոնց մէջ : Այսպէս նաև թէ, եթէ գերմանիան այս պատերազմին մէջ Մարտիացի կողմը բռնելու ըլլայ, յայնժամ Ռուսիան ալ պիտի ստիպուի Վաղղիոյ կողմը բռնել :

Հռչակաւոր հունգարացի Բոսութ երևելի անձը, որ ժամանակէ մը ի վեր Ռոստոն կը բնա- կէր, մօտ օրերս մեկնէր Ելիշեալ մայրաքաղա- քէն, ընկերութեամբ 300 հայրենակցաց : Իւր մեկնելէն յառաջ, Ռոստոնի Վաղղիոյ գետապան մօտիւ տը Բէրսիյիին հետ տեսնուեցր է : Կըսեն թէ Ռաշադուցի կողմը կը թալ :

Սեծամեծ պատրաստութիւնները՝ որ պատե- րազմին սկիզբէն ի վեր կը ըլլային Ռուսիի զինա- րանին մէջ՝ արդէն ընդհան ըլլալով, Գաղղիոյ նաւատորմիցը՝ հրամանատարութեամբ երրորդ ծովապետ մօտիւ Պուէ-Վիլմէզ կոմսին, այս օրերս պիտի մեկնէր Ռաշադուցի ծովազորքը երթա- լու համար : Ելիշեալ ծովապետին ուղի կից պիտի ըլլայ նաև փոքրիկ նաւատորմի մը բաղկացեալ բազմաթիւ թնդանօթակիր նաւակներէ : որոց մէջ Վիլց խումբը ցամաքի զինուոր պիտի գտնուին : Այս զօրախումբաց հրամանատարները փորձառու և քաջ պաշտօնատարներ են : որոնք գրեթէ աւելնքն ալ Սեպութաբոյի պատերազմին մէջ հրա- մանատարութիւն ըրեր են :

Ռոստոնէն հասած հեռագրական լուրերը կը ծանուցանեն թէ, բարլամէնթին բացուելու բարեպատեհ առթիւ, որ ամսոյս շին ըստ նոր տուժարի՝ տեղի ունեցեր է, օգոստոսիան Վիլթորիա թագուհին իւր գահախօսութեանը մէջ զորոցն է թէ Վնզիան ըստ ամենայն մա- տին կատարեալ չէ զորութիւն պիտի պահէ իտա- լական պատերազմին մէջ : Այս խօսքը մեծ հա- ճութեամբ և ծափահարութեամբ ըստուտուց- ր է բոլոր ունիցիրներէն :

Կը հաստատեն նաև թէ պաշտօնէից ժողովոյն դէմ՝ բարլամէնթին մէջ առաջարկութիւն մը ըլլալով, աղբային երեսփոխանաց խորհրդանօ- ցին մեծագոյն մասը ընդունեցաւ զայն, և այս եղելութեանէ ետեւ, պաշտօնէից ժողովը իւր հը- րածեալը մատուցեր է :

Հասարակաց խորհրդանօցին յիշեալ որոշու- մէն յառաջ, լրտ Սթրէթֆորտ տը Ռէտգլիֆ որ Հոմմն նոր հասած էր ի Ռոստոն, երկար խօսակցութի մը ունեցեր է թագուհւոյն հետ :

ԵՒՄԱՆՈՒՄՆ ԲՈՒՍԱՆ ԿՈՍՏԱՆՒՍՆՈՍ ՄԵԾ-ԴԻՔՍԻՆ Ի ԿՈՍՏԱՆՒՆՈՒՊՈԼԻՍ

Բարձրապատիւ կայսերազն կոստանդիանոս Մեծ-Վուքը, ընկերութեամբ իւր լծակցին Մեծ-Վրսուհւոյն և իւր մեծ որդւոյն որ ինը տարեկան է, Կրօնաքի պատերազմական շաքենա- լով անցեալ ամսոյ 25ին երկուշաբթի օրը հա- սեր է ի կոստանդնուպօլիս, և նոյն օրը թօփ- խանէն ցամաքը ելելով, Մեծ-Վրսուհւոյն և իւր պաշտօնատարացը հետ, արժանաւոր պատ- ուով ընդունուեցր է ի ծովազորքը մեծ ծովա- պետ Մէհմէտ Վիլի փաշայէն, մեծ զօրապետ Սիդա փաշայէն, Գրաւտ փաշայէն և արքունի պատրաստան խորհրդոց քարտուղարէն, որոնք ա- ռաջնորդէր են զՎրսին Բարձրութիւնը օգոս- տոսիան Սուլթանին քով՝ որ թօփխանէի ար- քայական բնակարանը կը գտնուէր : Այստեղ քիչ մը ժամանակ հարին Վեչափառութեանը հետ տեսնութիւն ընելէ ետեւ՝ Մեծ-Վուքը վերա- գարձեր է ի շաքենան, և հետեւեալ օրը Վիլի կէնի պալատը գացեր է. որ ինչպէս յայտնի է, արքունի հրամանաւ պատրաստուած էր ի բնա- կութիւն յիշեալ օգոստոսիայլ հիւրերուն :

Մայիսի 27ին չորեքշաբթի օրը, Մեծ-Վուքը օսմանեան երևելի պաշտօնատարաց և օտար տե-

րութեանց դեսպաններուն այցելութիւնը ըն- գուններ է մեծ մարդասիրութեամբ :

Հինգշաբթի օրը մայիսի 28ին, վեչափայլ սրբազնասուրբ կաթողիկոսն ամենայն Հայոց, նմանապէս կոստանդնուպօլսոյ մեր ամենապա- տիւ սրբազան պատրիարքը, ընկերութեամբ Մակար եպիսկոպոսին, Մեղիքօֆ զօրապետին և Տատեան Պօղոս-Վէյին, իրենց խոնարհ յարգան- քը մատուցանելու համար բարձրապատիւ Մեծ Վրսին գացեր են, որ բարեհաճեր է բազում սիրով ընդունելու զանոնք : Կայն օրը Յունաց Վ. Պօլսոյ, Երուսաղէմի և Մտիոքի սրբազան պատրիարքները, նմանապէս հռովմական Հայոց սրբազան պատրիարքը Կորնի կոյսերական Բարձ- րութեան տեսութեանը գացեր են :

Մայիսի 30ին շաբթ օրը Մեծ-Վուքը Յուն- նաց պատրիարքաց այցելութիւնը հատուցանե- լու գացեր է, և տեսնելու արժանի քանի մը տեղուանք պաշտելէ ետեւ, երեկոյն ներկայ գտնուեցր է մեծ հացկերութի մը, զոր օգոստա- փառ Սուլթանը ըրեր է Վէշիթաշի պալատը ի պատիւ կոստանդիանոս Մեծ-Վրսին : Միւսին ժամանակին բարձրապատիւ Մեծ-Վրսուհւոյն կայսերական կանանոցը արքայազուն Սուլթան- ներուն հետ կը ճաշէր :

Ամսոյս 31ին երկուշաբթի օրը վեչափառ կայսրը կէօքսույր ունեցած իւր արքունի ամսարանոցը նախաձաշիկ մը ըրեր է Մեծ-Վրսին և Մեծ- Վրսուհւոյն հետ, որոնք երեկոյն արքունի թատրերգութիւն մը եղեր է ի պատիւ Երցին կայսերական Բարձրութեանց : Այս թատրեր- գութեան ներկայ գտնուեցր են օգոստափառ Սուլ- թանը, կայսերական գերդաստանին անդամներէն քանի մը հոգի, տէրութեան գլխաւոր նախա- լարները, Ռուսաց գործակատարը, Մեղիքօֆ զօ- րապետը և Տատեան Պօղոս-Վէյը :

Հետեւեալ երեքշաբթի օրը, այնինքն ամսոյս 2ին կէսօրէն ետեւ, յիշեալ բարձրապատիւ կայ- սերազն հիւրերը Վրսի շոգենաւով մեկնէր են Նիքոլայէֆ երթալու :

Կը հաստատեն թէ օգոստոսիան Սուլթանը մեծագին ընծաներ տուեր է բարձրապատիւ Մեծ-Վրսին և Մեծ-Վրսուհւոյն : Այս ընծա- ներն են, պատուական սուր մը մեծագին աղա- մանդներով զարդարուած, մէկ զոյգ ականակուռ ծանրաքին սպարանջան (սիլվէրիկ) և ծխաբարձ եղէգի յատկացեալ գոհարադարք երկու դե- ղեցիկ աւելուք :

Թէպէտեւ մեր նախընթաց թուովը յունարէն Միլիթա անուն լրագրութեանէն քաղելով, տեղե- կութիւններ տուինք Ռուսաց բարձրապատիւ կայսերազն կոստանդիանոս Մեծ-Վրսին սուրբ Երուսաղէմ այցելութեան երթալուն վրայօր : սակայն հետեւեալ մանրամասն պատմութիւնը աւելի ճիշտ և ուշադրութեան արժանի է, ըստ որում կոստանդնուպօլսոյ մայր եկեղեցւոյն ա- լագ քահանայ տէր Վեորգ արժանապատիւ հայրը, որ անցեալ տարու ընէ սուրբ Երուսա- ղէմ ուխտի գացած ըլլալով, այս տարի երբ կը վերադառնար իւր հայրենիքը ի Պօլիս՝ ի զմիտէն անցնելով, հաճեցաւ հաղորդել մեզ զայն բանիւ, որ ականատես վկայ եղած է պատմուած մանրա- մասն եղելութեանցը : Այս եղելութիւններէն կը տեսնուի թէ սուրբ Երուսաղէմի Հայոց ա- մենապատիւ պատրիարք սրբազան Յօհաննէս արքեպիսկոպոսը, իւր սովորական կենցաղաբի- տութեամբ և խոհեմ գործունէութեամբ :

որչափ որ կարելի է, արժանաւոր յարգութիւն և մեծարանք բնորոշներ է գլխորին Բարձրութիւնը:

Այրիւ 30ին սրբոյ Երուսաղէմի վեհաժողովը բռնաբար և սրբազան պատրիարքունիք Հայոց և Զուռնայ և ամենայն հիւպատոսք բոլոր տէրութեանց, երան քաղաքէն դուրս ողջ ենելու համար զգալուստ բարձրապատիւ Կոստանդիանոս Մեծ-Վրթին Ռուսաց, որ ընկերութեամբ իւր շնակցին Մեծ-Վրթուհոյն և իւր որդւոյն նոյն օրը ժամը չորսին մեծ բաղնիքով տալիս եկաւ մը տաւ Արուսաղէմ, և սեղազի գնաց Տեոփոսոս Ի սուրբ Զարութիւն, և ամենայն ջերմեան դուրսեմբ երկրպագութիւն մատուցց կենսատու սուրբ գերեզմանին Քրիստոսի և ամենայն սրբաբանական տնօրինական տեղեաց նորին, որ Ի տաճարին սուրբ Զարութեան, և ապա գնաց Ի վանքն Զուռնայ և հանդեսացաւ:

Հետեւեալ օրը մայիսի մեկին գնաց Ի Գեթեմանի, և երկրպագեց ամենօրհիւստ սուրբ Եստուածածնի սրտեղբարուստ սուրբ գերեզմանին: Այլ Ի նոյն երեկոյցին Ռուսիոյ հիւպատոսի Թարգմանը եկաւ Ի վանս մեր առ ամենապատիւ սրբազան պատրիարք Հայրն մեր, և ի մացուց որ վաղը ժամ իննին Մեծ-Վրթուքն այս վանքը և սուրբ Զակարայ տաճարը պիտի դայ ուխտի և տեսութեան Չեր Հայրութեան հետ:

Ռուսի մայիսի 2ին՝ որ էր շաբաթ, մեծ պատրաստութիւն եղաւ սուրբ վանքոց մէջ, և գերապատիւ տէր Գեորգ աւագ լուսարար սրբազան արքեպիսկոպոսն անձանձիր և ըստ արժանւոյն զարդարեց սուրբ եկեղեցին և սքանչելաշէն մատուռն սուրբ Առաքելոյն Զակարայ, յորում է պատուական գլուխ նորին, և ամենայն կերպիւ ընդունելութեան արժանի եղած հանգեր ձանքները պատրաստեցան, և բարձրապատիւ քաղաքի ալ հարիւրի չափ կրթեալ զօրք խրկեր էր, որոնք եկան վանքին մեծ դրան երկու կողմը ըստ կարգի կանգնեցան: Ժամը ցին լուր բերին շառ առեալ և Ի ձեռն օմանց սուրբ Աւետարան և օմանց մատուռը սրբոց վիպից, և սարկաւագունք շապիկ զգեցեալ և ուրար զուսովք և սողաւարտ Ի գլուխ, և զպիրք ևս շապիկ զգեցեալ և Ի ձեռն մեծամեծ կերօն, և մին Ի սարկաւագաց բարձեալ Ի վեր մեծ քանաթեմ մի, և այնպէս վանքին դռնէն փողոցը ելան և դիմաւորեցին օգոստափառ հիւրերնին, և երբ իրարու մօտեցան յայնժամ սկսեցին երգել զարձական, «Թագաւոր դուրջ քո յաշխարհ»:

Այսպէս մտան վանքին դռնէն ներս, և ամենապատիւ սրբազան պատրիարքը հայրապետական ծանրաբար զգետոր հագած, խաչ և գաւազան Ի ձեռն կանգնած էր գաւթիքը, և շուրջանակի սարկաւագունք բուրվառ Ի ձեռն, և այսպէս դիմաւորեց նոյն արքայիցայր դուքսը և դքսուհին և նոյնին որդին, որոնք քրիստոնէավայել յարգութեամբ համբուրեցին նր խաչը և սրբազան Հօր շնորհաբաշխ Աջը, և յայնժամ աւագ լուսարար հայրը երեք հատ վառեալ մոմ բերաւ և տուաւ Մեծ-Վրթին և Վրթուհոյն և որդւոյ նոյնին, և թիաբան սկսան երգել «Կշանաւ ամենայաղթ խաչի քո Քրիստոս»: և այսպէս սաճարին դռնէն հանդարտաբայլ ընթացիւք ներս մտան, և դնացին մինչև դասին առաջը, և ըտոր միաբանք երկու դաս յաճեց և յահեկէ կանգնեցան, և այն տեղ սրբազան Հայրը անդաստանի Աւետարան մը կարդաց, և Ի վերջնայն սարկաւագունք սկսան երգել: «Այլ և սաղապութեան զՏէր աղաչեցուք»: Արբազանն ձայնիւ «Տէր ողորմեա»:

Արկաւագն «Վասն Ի վերուստ խաղաղութեան աշխարհիս և օքնականութեան Թագաւոր կայսեր Ալեքսանդր Նիկիոյցի զՏէր աղաչեցուք»: Արբազանն «Տէր ողորմեա»:

Արկաւագն «Ողորմեաց մեզ տէր Եստուած մեր, և այն»:

Արբազանն «Տէր ողորմեա, (երկցօ), օհնուր թիւն և փառք հօր» և այլն:

Արկաւագն «Ամեն ախեղախ»:

Արբազանն «Օրհնեցի և պահպանեցի և նախախնամեալ պահեցի Թագաւորութիւն ալ մենաբարեպաշտ Նիքնոկալ և կայսեր ամենայն Ռուսաց Ալեքսանդր Նիկիոյցիէն այս նշանաւ» և այլն (երկցօ):

Արկաւագն «Սուրբ խաչիւս», և այլն: Արբազանն «Պահպանեալ Քրիստոս Եստուած զԹագաւոր Նիքնոկալ կայսրն ամենայն Ռուսաց Ալեքսանդր Նիկիոյցիէն, և զգուգակից նորին բարեպաշտ Թագուհի և կայսերուհին, նաև զբարեպաշտ Մեծ-Վրթուն Կոստանդիանոս Նիկիոյցի և զգուգակիցն սրբաբարեպաշտ մեծ դքսուհին և զգաւաւորն իւրեանց և զամենայն ժողովուրդս քո ընդհովանեաւ նր» և այլն:

Յետ այսորիկ սրբազան պատրիարքը գնաց սրբ Մինասի պահարանը զգետոր հանելու, յայն ժամ զպրատան մանկունք քաղցր եղանակաւ սկսան զննազան տաղեր երգել, և աւագ լուսարար Հայրն ալ հրաւիրեց այն ջերմեանդը և բարեպաշտ օգոստափաղ ուխտաւորները համբուրել զուրբ կենաց փայտը և սուրբ Աւետարանը՝ որ բեմին վրայ պատրաստեալ էր վառեալ ճաղկերով և բուրմամբ անուշահոտ խնկոց, որոնք եկան յառաջ և երկրպագութեան համբուրեցին, և յետոյ տարաւ Ի սքանչելաշէն մատուռն սրբազան Առաքելոյն Զակարայ, որոյ շիրմի պատուական գլխոյն ծնրադրութեամբ երկրպագեցին, և անտի անարան Ի տաճարն որ յանուն սուրբ Իշմիածնի, և անդանօր ևս ուխտերնին կատարեցին, և անտի մինչ դուրս ելան, Արբազան պատրիարքը Հայրն ալ զգետոր հանած դիմաւորեց և հրաւիրեց Ի վեր նորա շէն հոյակաղ պատրիարքարանն, և յառաջ մանկունք զպրատան երգելով՝ գնացին Ի վեր Ի մեծ սրահն դիւանին, և անուշեղէն խաչիկ և օշորակ տարով՝ պատուեցին: Այն ամենապատիւ սրբազան պատրիարքը Հայրն մեր, որ Ի պատիւ աղբիս յառաջադոյն պատրաստեց էր ոսկեայ և ակամբք զարդարեալ խաչ մի և իմիջի եղեալ մասն ինչ կենսատու փայտին կենաց, և վիպականն ալ Ի միասին, ինչպիսի մատուց Մեծ Վրթին, թոյնով՝ որ մեր ներքին շնորհակալութեան արտաբայն սշուք բարեպաշտ սրբազան Վրթուն և Վրթուհոյն Ի պահպանութիւն նորին: զոր շնորհակալութեամբ և համբուրել ընդունեցին, և ինչպիսիցն՝ որ վիպականն ալ զաղղիւրէնի Թարգմանել տարով այնպէս իրեց խրկէ, և վիպականին օրհնակի է այս:

Արբազանը Մեծ-Վրթուն հի Ալեքսանդրա Իօսիփօնա:

Եստուածազոյգ Կապակից ամուսին Բարեպաշտ Մեծ-Վրթին և ծիրանածին Իջևանի Կոստանդին Նիկիոյցի:

Արբազանն ըստորում կայսերական վերգատանն, ծիրանաղբեաց փառօք Թագաւորայել նշանաց մեծապատիւ փառաւորեալ էր գեր Ի վերոյ ալ մենեցուն, և վասնզի փառք և պատիւ դատուք ուղղափառ քրիստոնեայ ազգացօ՝ յոյժ ամենաջերմեանդ Թիւն Քրիստոսաշնչիկ սրբազան տեղեացս, որպէս և աւ մեզ յեկեղեցի մեր՝ սքանչելաբար շիրմի սրբազան Վրթուն սուրբ առաքելոյն Զակարայ Մեծի որդւոյն: Օ երեղեայ Ի նշան շնորհակալութեան սրտի մերում և Ի պահպանութիւն անձնիդ մեծափառութեան՝ ընծայի Եստուածաւոր մեծ զշնչիդ կենսատու նշան վրկաւթի փայտին սրբոյ խաչին Զիտուհի որ է փառք և պատիւ քրիստոնեական կաթնուղիկէ եկեղեցւոյ, որոյ ամենայաղթ զօրութեան յանձն առնելով զբարեպաշտութիւն ձեռք, միամ երջանիկ կենդանութեան ձերում աղօթարար: Ի սուրբ Երուսաղէմ, 2 մայիսի 1859, (Տ. Կ):

Պատրիարք լուսարարական Հայոց առաջիկան անտուայ որդւոյ Զակարեանց արքեպիսկոպոս Զովհաննէս:

Այս ընդունելութեան միջոցը իբրև ժամ և կէս տեւեց, և ապա ելան և բոլոր վեղարաւորք յառաջ և սրբազան պատրիարքը Հայրն մեր Ի միասին գնացին Հարեալապետաց մեր վանքը, որ Ըննա քահանայապետին տունն է, և Փրկչին մերոյ առաջին բանտը անդանօր է, և ծառն ձիթենուց ևս անդ է, յոր կապեցաւ Քրիստոս: Այն տեղ ալ իրենց ջերմեանդն ուխտերնին կատարեցին, և անտի երկերով՝ քա

ղաքէն դուրս Ի միասին գնացին Ի սուրբ Փրկչի վանքն մեր, որ կայիափայ քահանայապետին տունն է, և Քրիստոսի երկրորդ բանտը անդ է, և ուրտեղ Պետրոս զՔրիստոս ուրացաւ: Քրիստոսի կենսատու գերեզմանին կափարիչ քարն ալ անգ հաստատուած է աւագ սեղանոյն վրայ, յորում սուրբ պատարագ մատչի և աստանօր ևս քրիստոնեական պարտաւորութեամբ իւրեանց երկրպագութիւնը մատուցին, և ողջունել սիրոյ և յարգանաց բաժանեցան Ի միմեանց:

Այս ապա նոյն վիպականը զաղղիւրէնի Թարգմանելով՝ մինչ պատրաստեցաւ, մայիսի 7ին հինգշաբթի օրը սրբոյ Երուսաղէմի Ռուսաց հիւպատոսը հրաւիրակ եկաւ առ սրբազան պատրիարքն մեր Ի կողմանէ Մեծ-Վրթին, որ Ի նոյն երեկոյցին ժամը 12 միայն գաւազանակիր արքեպիսկոպոս իւրով գտնուի Ի բնակութիւն Կորին կայսերական բարձրութեան Ի սեղանակցութիւն, ընդ նմին և Զուռնայ սրբազան պատրիարքն և Ռուսիոյ սրբազան Արքեպիսկոպոսն: Այլ ըստ ժամագրութեան մինչ սրբազան պատրիարքն մեր կերթար, Ի կէս ճանապարհին պատահեցաւ Ռուսիոյ արքեպիսկոպոսին զորդարին կայսերական բարձրութիւնը Ի պատիւ խրկեր էր դիմաւորել լու, ընդ որում մտեր են Ի յատկացեալ սրահն և անդանօր ըստ սովորութեան նոյցին, փարեւով յարգեր են զիրեարս, ընդ Մեծ-Վրթին և դքսուհոյն, և յայնժամ սրբազան պատրիարքը Հայրն մեր մատուցեց է նոյն կենաց փայտը և կրթեալ վիպականը հանդերձ զաղղիւրէնի Թարգմանութեամբն Ի ներկայութեան պատրիարքին Զուռնայ և Ռուսիոյ արքեպիսկոպոսին, զոր ըստ առաջին նուագին ջերմեանդն համբուրել ընդունեց են շնորհակալ զինելով: Այլ ապա Ի սեղանակցութեան և ըստ կրթական յարգութեան մեր սրբազան պատրիարքը Հայրը առնելով զքսուհոյն բաղնիքուց են, և մինչև քիչեւ ըստին ժամը երեք մտարով՝ մեծ պատուախորութեամբ և անխտիր խոսակցութեան ընդ իրեարս, ապա վերջին հրաժարական ողջունել բաժանեցեր են իրարմէ: Ի այն Մեծ-Վրթուքն առաւել պատուոյ նշան յոյց տարով՝ մինչև ցիկէս սանդղցն ընդ սրբազան Հօր մերոյ գաղով, այնպէս ուղևորեր է: Այլ Ի հետեւեալ ուրբաթ երեկոյցին ևս բոլոր հիւպատոսները՝ առանց Թարգմանի և լծակցաց, հրաւիրեց յընթրիս, և շաբաթ օրը ձանապարհորդ եղաւ: Ի 10 մայիսի կիրակէ երեկոյցին հասաւ Ի Զոպպէ, և երկուշաբթի երեկոյցին Ի ժամ 12, իւր արբուհի նաւերով մեկնեցաւ Ի Զոպպէ յաղղութեամբ Տեառն:

ՄԵԿԵՆԵ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ

ՎԵՀԱՓՈՅԼ ՍՐԲԱՆՆԱՍՈՒՐԲ Տ. ՄԱՏԹԵՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՏՆ ՀԱՅՈՑ

Քանի որ Կորին Սրբազանութեան բաժնուելով օրը կրթմունեար, հասարակութեան սիրալիր ջերմեանդութիւնը և որդիական զգացմունքը ևս կաւե ընար, և կըհաւասարէր Եստուածապատիւ քահանայապետին սրտին հոյրական գործվոյն: Ռուսի ամուսն 2ին երեքշաբթի օրը, այս բաժնուելը որչափ որ շքեղ և փառաւոր նշնջափ ևս սրտաշարժ յոյժ եղեր է: Այն ժամ բաղնիքի հայկազուն ժողովուրդեան, նոյն օրը առաւօտէն սկսեալ Պէյոզու վոսմաշուք Տատեան Պողոս Պէյլին տունը կերթային Կորին Սրբազանութեան բարի ձանապարհորդութիւն մաղթելու և անոր սուրբ օրհնութիւնը ընդունելու համար: Այս օրէն երկու ժամ անցած, վեհափայլ կաթողիկոսը ընկերութեամբ Տատեան Պողոս Պէյլին Տորմա Պօլքէի կայսերական պալատը երթարով՝ պատիւ ունեցեր է իւր հրաժարական խնարհ յարգանքը մատուցանելու օգոստափառ Սուրբանին, որ մարդասիրական յարգանք ընդունեց է զինքը և Արքունի պալատէն ելելով, Կորին Սրբազանութիւնը ուղղակի Միջագիւղ քաղցր է Ի ծովեղերեայ տունն Փափագեան մեծարգոյ Սիրիճան ամիրային, ուր ժողովուած են եղեր ամենապատիւ սրբազան պատրիարքը, և ուրիշ բարձրաստիճան եկեղեցականը և աշխարհական հայկազուն երեւելիք, նմանապէս Ի որում Մեծ լիւրով զօրապետը: Այլ հափայլ կաթողիկոսը այնտեղ իւր

Վերջին սուրբ օրհնութիւնը արտասուաբար աչք  
և մեծ ջերմեանդ ութամբ տարով ամենուն ,  
և բարորութիւն ու աւետարանական խաղա  
ղութիւն բարեմաղթելով բոլոր ազգին : յատուկ  
պատրաստած փոքրիկ շոգենաւ մը մտեր ու  
Իմիրկէնի առջև կայնած Ռուսաց ընկերութե  
Քերտուէր կոչուած մեծ ու գեղեցիկ շոգենաւը  
գացեր է : զոր բարձրապատիւ կատանդիանոս  
Սեծ-Իուբը Նորին Սրբազնութեան հրամանա  
ցը ներքև դրեր էր : Այս շոգենաւով Նորին  
Սրբազնութիւնը մեկնել է Բոթի երթալու ,  
ուսկից սուրբ Լլջմիածին իւր առաքելական ա  
թոռը պիտի երթայ :

Վեհափայլ սրբազնասուրբ կաթողիկոսին ըն  
կերակից եղեր են , բայց ՚ի վսեմափայլ Սեւե  
գոֆ զօրապետին և գերապատիւ Սահար ու  
Սարգիս եպիսկոպոսներէն , արժանապատիւ  
Սարգիս Թեոզորեան , Սկրտիչ , Գալուստ ,  
Մեղէաս , Երբահամ և Սեւրուպ վարդապետնե  
րը , նմանապէս չորս սարկաւազունք : Նորին  
Սրբազնութիւնը խորհրդայ քարտուղարի պաշ  
տօնիւ հետը տարեր է իւր վաղեմի հաւատարիմ  
գրագիրը , ուսումնական տէր Լեւոն Պէրպէս  
եան պատուելին և թարգմանի պաշտօնիւ յարգոյ  
պարոն Սարկոսը Նշաբէգեան :

Վեհափայլ կաթողիկոսը մեծաշուք Սիրիճան  
ամիրային տունէն չմեկնած , Լուսուֆեանց տէր  
Տիգրան ուսումնական երկուստարդ աղետականը  
՚ի զիմաց ազգին հետեւեալ ատենախօսութիւնը  
ըրեր է , ուղղեալ առ Նորին Սրբազնութիւնն  
և առ վսեմափայլ Սեւեգոֆ զօրապետն .

Ըստուածարեալ Սրբազնագոյն Հայրապետ ,  
Հասաւ վերջապէս այն վայրկեանը՝ որ պիտի  
բաժնէ զմեզ Չեր Վեհափայլութեան համայ  
նից սիրելի տեսութենէն և հայրագորով առա  
տագուծ խնամքներէն : Վայրկեան արդարեւ  
զառն և արամեցուցիչ : Բայց ձեր քօլը ժող  
քուելու փութացող ազգախնամ իշխանաւորաց  
ամիրայից երեւելեաց և առհասարակ ջերմեանդ  
ժողովրդեան սիրագուժար խումբը , յայտնի ա  
պացոյց ըլլալով ձեր բարձր Սրբազնութեան  
ազգերնուս վրայ ունեցած հայրախնամ սիրոյն  
հաւաստեցը , աւերորդ կրհամարիմ զայն բա  
ցատրել : սակայն հրաման տուէր Սրբազնագոյն  
Հայրապետ , որ Չեր Վեհափայլութենէն հրա  
ժարական օրհնութիւնը խնդրելէ առաջ , նուի  
րեմ ձեզ ՚ի զիմաց ազգին , ժողովրդեան մը  
իւր առատագուծ Հօրը վրայ ունեցած երախ  
տագէտ համակրութիւնը և որդիական ակնա  
ծութեան անկեղծ զգացմունքը : Այն , կրմեկնիք  
վեհափայլ Տէր , բայց անտարակոյս եմք , որ  
ինչպէս սրտերնուս մէջ անջնջելի պիտի մնայ  
ձեր բարձր Սրբազնութեան քաղցր յիշատակը  
նոյնպէս և մեր վրայ ունեցած հայրագորով ան  
սպառելի խնամքներնիդ հեռուէն ալ պիտի հաս  
նին զմեզ միմիջարեալ :

Այն քրիստոնէափայլել եղբայրսիրութիւնը որ  
ծաւալեցիք ազգերնուս մէջ և ձեր մեծագոր  
օրինակովը հաստատեցիք զայն , աներկբայ եմք  
թէ ապագայ մը կրբանայ մեզի համար , որնոր  
միայն կարող պիտի ըլլայ առաջնորդել զմեզ ՚ի  
պողոտայն արդի տիեզերական քաղաքակրթու  
թեան , ուր կըհրամային մեզ զիմեւ ազգերնուս  
պաշտպան երկու մեծագոր տերութեանց օգոս  
տափառ Կնքնակրները :

Արեւմտ արտասուօք կրբամեա իմք ՚ի ձէնջ , և  
կաղաքեմք որ հաճի ձեր բարձր Սրբազնութիւնը  
իւր հետը առնելու ասանելու սրտերնուս խորը  
գրոշմուած մեր սրբիական անկեղծ սիրոյն  
հաւաստիքը :

Վսեմափայլ զօրապետ ,  
Նոյնպէս և դուք ապահով եղիք : որ ոչինչ  
նուազէ մեր կսկիծը քան զայն , որ կաղաքեմք  
մեր սրբազնագոյն Հօր մէնէ բաժանու մը , և  
կըյուսամք որ այն տեղը զոր դրաւեցինք ձեր  
սրտին խորը այլափ քիչ ատենուան մէջ , միշտ  
մերն պիտի ըլլայ բացարձակ և անխափան :

Մայիսի 21ին , Քրիստոսի տեառն մերոյ համ  
բարձման տօնախմբութեան օրը , ինչպէս ամեն  
տարի , այս տարի ևս փառաւոր հանդէս մը կա  
տարուեր է Ետի Գուլէի , սուրբ Փրկչեան վա

նուց ազգային ճեմարանին մէջ , ուր ներկայ  
էին վեհափայլ սրբազնասուրբ կաթողիկոսը ,  
կատանդիանուպոլսոյ ամենապատիւ սրբազան  
Պատրիարքը և ուրիշ եպիսկոպոսներ և վար  
դապետք : նմանապէս Սիբայէլ Միանարով  
հայկազուն պաշտօնատարը , Տատեան վսեմա  
փայլ Պօղոս և Յօհաննէս Պէյերը , Փիլիպիտեան  
Նշան ամիրան , ազգային գերագոյն ժողովոյն  
անդամոց մէկ մարը և ուրիշ երեւելի անձինք :

Նոյն օրը ամենապատիւ սրբազան պատրիարքը  
հանդիսաւոր սուրբ պատարագ մատուցեր է  
յիշեալ վանուց եկեղեցոյն մէջ , որուն լմրնա  
լէն ետեւ ճեմարանը մտեր են , ուր՝ աշակերտաց  
աշխատասիրութիւնները զինի աչքէ անցնելու ,  
հոգեւոր և աշխարհական մեծարգոյ հանդիսա  
կանները բարեհաճեր են ունկնդրութիւն մա  
տուցանելու ատենախօսութեան մը , զոր նոյն  
ճեմարանին հայկաբանութեան և թուաբանու  
թեան դասատու , պարոն Ստեփան Պ . Պօղոս  
Փափազեան պատուելին ըրեր է :

Այս ատենախօսութեան մէջ , սուրբ Փրկչի  
ճեմարանին այժմեան բարեկարգ և յառաջադէմ  
վիճակը յառաջ բերուելէ ետեւ , և անոր յար  
գոյ հոգաբարձուաց , այսինքն սնտեսական ժո  
ղովոյն անդամոց մտերիմ շնորհակալութիւն մա  
տուցուելէ ետեւ , յիշեալ ազգային ճեմարանին  
մեծ հարկաւորութիւնը և ազգօգուտ սրբիւնքը  
յառաջ կըբերէ : Այսօրուան օրս մեծ միմիջա  
րութիւն է ազգին համար , կըսէ , որ գոնէ մէկ  
ճեմարան մը ունի , ուր ազգին որք և անտե  
րուշ տղայքը կըպատասխարուին : Այն , բարե  
բաղք են այս աշակերտները , կըշարունակէ ա  
տենախօս պատուելին : որ իրենց մանկութիւնը  
ասանկ յարկի մը ներքև պատասխարուած անցնե  
լով կըդաստիարակուին և հարկաւոր եղած ուս  
մանց մէջ կըդարգանան , զերծ մնալով այն մո  
լութիւններէն , որոնց ենթակայ են իրենց նմա  
նները , արձակերասան շրջելով աստ և անդ , և  
անոնցմէ շատերը և խիստ շատերը վերջապէս ի  
րենց կատարելութեան վիճակին մէջ կենդանի  
մեռեալ կըհամարուին , զուրկ մարդկութեան  
արժանաւոր և վայելուչ ամեն տեսակ բարե  
մասնութիւններէն :

Ազգային մանկանց բարոյական և ուսումնական  
կրթութեանը համար գիշերով և ցորեկով վար  
ժարաները ամենահարկաւոր ըլլալը ապացուցա  
նելէ ետեւ , ազգին խնամքը կըհրաւիրէ , խոնար  
հաբար ՚ի վերայ սուրբ Փրկչեան ճեմարանին :



ՓՈՒՌԻՄՆ ԵՐԱՅԵԱՅ  
ՎՍԵՄԱՇՈՒՔ ՄԱՍՆՈՒՏ ԱՄԻՐԱՅԻ

Կատանդիանուպոլսոյ բազմահարուստ հայկա  
զուն սեղանաւորներն յսեմաշուք Սարիմեան  
Սագուստ ամիրան , որ երկար ժամանակէ ՚ի վեր  
վտանգաւոր հիւանդութեամբ մը կըտառապէր ,  
մայիսի 23ին գիշերը առ Ըստուած փոխուեր է  
՚ի հասակի գրեթէ 60 ամաց : Հանգուցեալ ա  
միրան , որ օգափոխութեան համար Գատրգեղ  
գացած էր , յատուկ շոգենաւով մը Սիջաքիւղ  
բերուեր է յիշեալ ամայն 30ին և հետեւեալ  
օրը , որ էր կիրակի , անոր յուղարկաւորութեան  
և թաղման սգալի հանդէսը մեծ փառօք և ար  
ժանաւոր շքեղութեամբ կատարուեր է . որուն  
ներկայ գտնուեր են վեհափայլ կաթողիկոսը ,  
ամենապատիւ Գեորգ պատրիարքը , ամենապա  
տիւ Յակոբ նախկին պատրիարքը և ուրիշ բազ  
մաթիւ եկեղեցականներ . նմանապէս ազգիս  
բոլոր ամիրանները , երեւելիները և խուռն բազ  
մութիւն ժողովրդեան :

Հանգուցեալ մեծանուն ամիրան , որուն մահ  
ուանը վրայ ազգովին կըցաւիմք այսօր , ծանրա  
բարոյ խոհեմանձ մըն էր և մեծ յարգ ու հա

մարումունէր թէ օսմանեան տերութիւնը առջև  
և թէ ազգային ու օտարազգի երեւելեաց մէջ :  
Այս յարգը և համարումը՝ հաւաստի եմք թէ  
հաստատուն պիտի մնայ և Ըստուածով պիտի ա  
ւելնայ Լուսաւորչոյն մեծ որդւոյն մեծարգոյ  
Սարիմաղային ազնիւ բնաւորութեամբը և գոր  
ծունեայ խոհեմութեամբը : Այս ակնկալութիւնը  
անտարակոյս ոչ սակաւ միմիջարութիւն մըն է  
բոլոր ազգին համար , որուն պարծանքն են մեր  
ազնեայ Ամիրաները և Պէյերը :

Ազգային ուսումնասիրական կանդիս :

Վճայոյ 4ին Հինգշաբթի օրը , քաղաքիս Հախի  
սիմեան վարժարանին մէջ , առանց նախապատ  
րաստութեան , մասնաւոր հարցաքննութիւն ե  
ղաւ , ՚ի ներկայութեան գերապատիւ սրբազան  
Առաջնորդին մերոյ , ազգային հոգաբարձուաց  
և քանի մը ուսումնական աղետականաց : Առա  
կերտուհիները՝ իրենց տուած պատասխաններովը  
գոհ ըլլին և ապահովոյցին զքննիչները թէ ըստ  
բաւականին յառաջացեր են իրենց ուսմանցը  
մէջ , որոնք են հայերէն քերականութիւն ,  
սկզբունք գործնական թուաբանութեան , հրա  
հանգք քրիստոնէական վարդապետութեան ,  
պարզ գրաբար շարագրութիւն և գեղեցկա  
գրութիւն , նմանապէս գաղղիկերէն լեզուն . ո  
րուն դասատուութիւնը քանի մը ամիսէ ՚ի վեր  
միայն հաստատուեցաւ : Առաջերտուհեաց ձե  
ռագործ զանազան աշխատասիրութիւնները , որ  
շատ տեսակ ու խիստ պատուական էին , ընդար  
ձակ սեղանատասխակի մը վրայ շքեղ կերպիւ  
կարգադրուած կըտեսնուէին , որոց վրայ հան  
դիսականները մեծապէս գոհ եղան :

Աւերորդ կրհամարիմք զուրցելու թէ Հախի  
սիմեան վարժարանին ամեն կերպ բարեկարգու  
թիւնը յայտնի տեսնուեցաւ այս առթիւ , քան  
զի վարժարան մը երբոր կըյառաջադիմէ , երբ  
որ անոր մէջի ուսանողները արդիւնք կըցուցը  
նեն , տարակոյս զկայ թէ բարեկարգութիւնը կը  
տիրէ նոյն վարժարանին մէջ :

Վերջապէս մեր գերապատիւ հոգեւոր հովիւը  
համառօտ ատենախօսութեամբ մը իւր անկեղծ  
գոհունակութիւնը վարժապետաց , վարժապետ  
ուհեաց և վարժարանին հոգաբարձուաց յայտ  
նելէ ետեւ , և բոլոր աշակերտուհիները , որոց  
թիւր 200ի չափ է , հայրական խրատներով ՚ի հա  
մեստութիւն և յուսումնասիրութի յորդորելէ  
ետեւ , իւր սուրբ օրհնութիւններովը և բարե  
մաղթութիւններովը վախճան տուաւ այս ազգա  
յին ուսումնասիրական պատուական հանդիսին :

Երկուշաբթի օրը , այսինքն ամայն 8ին , որ  
սրբոց կուսանացն Հախիսիմեանց տօնախմբու  
թիւնն էր , հանդիսաւոր պատարագ մատուցաւ  
սուրբ Լուսաւորչի եկեղեցին . ուր ներկայ էին  
Հախիսիմեան վարժարանին բոլոր աշակերտու  
հիներէն և բազմաթիւ տիկներէ ՚ի դատ , յիշեալ  
դպրատան բարերար բամբիշները վսեմաշուք  
Հախիսիմէ տիկին կատանդեան և վսեմաշուք  
Յուլիանէ տիկին Լուսուֆեան(1) , ընկերութե  
իրենց մեծապատիւ լծակցացը : Սուրբ պատա  
րագը լմրնալէ ետեւ , պատարագիչ քահանայն  
վարժապետուհեաց և բոլոր աշակերտուհեաց ,  
Հախիսիմեանց վարժարանը գացին . ուր ՚ի ներջ  
կայութեան յիշեալ բարերար մեծուհեաց և  
բազմաթիւ հանդիսական տիկնաց , պարագայիս  
յարմար մաղթանքներ և հոգեւոր երգեր զըու  
ցուելէ ետեւ , յառաջադէմ աշակերտուհիներէն  
Մատանեան Վարդուհի օրիորդը բարեմաղթա  
կան և երախտագիտական ատենախօսութիւն մը  
կարդաց ուղղեալ առ վսեմաշուք բարերարուհիս  
Հախիսիմեան վարժարանին . (Յետ այնորիկ  
Չարուհի Թ . Իալթեան օրիորդն՝ նոյն դպրո  
ցին հոգաբարձուաց ուղղեալ շնորհակալութե  
ատենախօսութիւն մը կարդաց . և վերջապէս  
Լլջիտաբեթ Ս . Փափազեան օրիորդն առ իւր  
ընկերակից աշակերտուհիս ուղղեալ քաջալերա  
կան ատենաբանութիւն մը կարդաց . և այս երեք  
ձառերն ալ ծափահարութեամբ և սիրով ըն

(1) Յայտնի է որ այս գեղեցկաշէն վարժարանը կատանդեան  
Հախիսիմէ տիկնոջ ծախիւքը կառուցաւ ըստ ժամանակին , և  
անոր մէջի հաստատեալ գաղղիկերէն դասատուութեան ծախիւքը  
Եւսուֆեան Յուլիանէ տիկինը կրճարէ :

